

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Ձեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ժողովի որոշումների հետ կապված մանրամասներ, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (մանրամասները կցվում են` առդիր 1թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի պահանջի, բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) 19.03.2010թ-ին կայացած բաժնետերերի արտահերթ ժողովը կայացրել է հետևյալ որոշումները՝

1. Չօգտվել Ընկերության բաժնետեր՝ Արման Բաբաջանյանի և Արա Հասրաթյանի սեփականությունը հանդիսացող Ընկերության համապատասխանաբար 77 և 41971 հատ հասարակ բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից (նշեմ, որ չօգտվելուց հետո նշված բաժնետոմսերի ամբողջ քանակի ձեռքբերման ցանկություն է հայտնել Ընկերության խոշոր բաժնետեր Սամվել Բեգլարյանը և Ընկերությունը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով է ներկայացրել համակենտրոնացման հայտարարագրերը):

2. 2010թ. մարտի 19-ից Տնօրենների Խորհրդի նախագահի տեղակալի զբաղեցրած պաշտոնից՝ համաձայն իր դիմումի ազատել Արա Հասրաթյանին և Տնօրենների Խորհրդի նոր անդամ ընտրել Ընկերության գործադիր տնօրեն Պապ Բադալյանին:

3. Հիմնադրել «Շեն-Գրուպ» ՓԲԸ դուստր Ընկերություն, որով պետք է իրականացվեն գիպսի հանքի շահագործման աշխատանքները և պետական գրանցման համար դիմել ՀՀ Պետռեզիստրի համապատասխան բաժին: